



Ա Մ Ո Ա Գ Ւ

ԿՐԾՆԱՆԱՆ, ՊԱՅՄԱՆԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԿԱՆ

ԹԻՒ Դ. — ՏԵՐԻ Դ.

1871

ՕԳՈՍՏՈՒ 31

Կ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԹՈՂ. ԵԿԵՂ. ԿՑԻՑ

(Հ-Ռ-Ռ-Ն-Հ-Ռ-Ռ-Ն և լ-լ-լ-լ)

Զայն այս ասելի է և վասն բղխման
հոգւոյն սրբոյ: Լամինացիք ասեն թէ՝
ողին սուրբ յառաջ գայ ի հօրէ և յոր-
դոյ: Իսկ Եղեղեցիքն ձոռոմոց, Ձայոց,
Հսորոց, Խպտոց, Ձապէշից, և Խթէօ-

պացւոց, ամենեքեան ասեն թէ ի հօրէ ե-
լանէ, և առաքի առ մեզ ձեռամբ որդւոյ:
Բայց այս է միայն կերպից խօսելոյ, և ոչ
զանազանութիւն հաւատոյ: Վանդի հա-
ւատն մեր ուսուցանէ մեզ վասն բղխման
հոգւոյն սրբոյ զայս միայն թէ՝ որդին ա-
ռաքէ մեզ ի հօրէ զհողին սուրբ. որ ի հօ-
րէ ելանէ: Եհա՛ այս է հաւատն մեր ի վե-
րայ բղխման հոգւոյն սրբոյ՝ զոր աւետա-
րանիչքն և առաքեալքն ուսուցին մեզ:

Եւ ի վերայ այսորիկ արևելեան և ար-
ևմտեան քրիստոնեայքն միաբան են: Բայց
զանազանութիւն է ի վերայ կերպից խօսե-
լոյ: Օի արևմտեան Եկեղեցիքն ասեն թէ՝
հոգին սուրբ յառաջ գայ ի հօրէ և յորդ-
ւոյ: Խոկ Եկեղեցիքն Հոռոմոց, Հայոց,
Վասոց, Խոպտոց, Հապէշից, և Եթօպաց-
ւոց՝ թէ բղիսի ի հօրէ և առաքի առ մեզ
ձեռամբ որդւոյ: Պատճառն սորա է զանա-
զանութիւն լեզուաց: Քանզի նախղիրս
այս ի լեզուս Հոռոմոց և այլոց վերոգրեալ
աղղաց զպատճառ և զսկիզբն նշանակէ.
վասն այնորիկ ո՛չ կամին ասել նոքա ի հօ-
րէ և յորդւոյ. զի մի՛ նախղիրս ի երկու
ասացեալ տացէ հոգւոյն սատճառս, և եր-
կու սկիզբն: Բայց ո՛չ է այսպէս ի լեզուս
Կաթինացւոց. Քանզի ի լեզուս նոցա եր-
կու ասացեալ նախղիրս այս ի ո՛չ նշանա-
կէ զերկու պատճառս և զերկու սկիզբն.
վասնորոյ ասեն նոքա ի հօրէ և յորդւոյ,
իրրե ի միոյ պատճառէ: Ու ասն այնորիկ
ի ժողովն Գլորէնցիոյ, յետ բազմօրեայ հա-
կածառութեանց ի վերայ բղխման հոգւոյն
սրբոյ, հայրապետքն Հոռոմոց միաբանե-
ցան ընդ Կաթինացին ասելով թէ՝ մեզ
զիտելք՝ որ Կաթինացի եղայլքն մեր ոչ
առանց պատճառի եղեալ են ի հաւատամ-
քըն իւրեանց թէ՝ հոգին սուրբ բղիսի ի
հօրէ և յորդւոյ: Բայց թէպէտ մլք ո՛չ
զիցիք այնպէս ի հաւատամէն մեր, այ-
կամիք ասել այնպէս, որպէս յառաջին
սուրբ ժողով Կոստանդինուպոլիսի, գու-
մարեալ ընդդէմ հոգեմարտին Մակեդոնի,
ուսոյց մեզ թէ՝ հաւատամք ի հոգին սուրբ՝
Տէր և կենդանաբարք՝ որ ի հօրէ ելանէ:

Եյսմիկ հաւանեցան Կաթինացիք և
միաբանեցան ընդ միմեանս: Աւստի յայտ

է թէ՝ յասելն՝ հոգին սուրբ յառաջ գայ
ի հօրէ և առաքի առ մեզ ձեռամբ որդւոյ:
Աս միայն զանազանութիւն խօսելոյ է, և
ոչ հաւատոյ: Քանզի երկոքեանք ևս ձայ-
նիւ միաբան ասեն թէ՝ որդին տռաքէ մեզ
զհողին սուրբ, որ ի հօրէ ելանէ: Եւ այս
է հաւատն մեր ի վերայ բղխման հոգւոյն
սրբոյ: Օի զայս ուսուցին մեզ աւետա-
րանիչքն և սռաքեալքն իրրե զբան հա-
ւատոյ:

Խոկ յետոյ երր քրիստոնեայքն կամե-
ցան մեկնել զայս առաքումն հոգւոյն սըլ-
բոյ. իւրաքանչիւր ազգ մեկնեաց զնա. ըստ
յատկութեան լեզուի իւրոյ: Ոմանք ասե-
լով թէ՝ հոգին սուրբ յառաջ գայ ի հօրէ
և յորդւոյ, ոմանք ասելով թէ՝ բղիսի ի
հօրէ և առաքի առ մեզ ձեռամբ որդ-
ւոյ, և այլք ոմանք թէ՝ բղիսի ի հօրէ և առ-
նէ յորդւոյ. որպէս ասէ սուրբն՝ ‘Եերսէս’
բղխումն հօր անքննաբար, առօղ յորդւոյ
անձառաբար: Բայց այս զանազանութիւնս
որպէս ցուցաք ի վերոյ է միայն կերպ խօ-
սելոյ. և ո՛չ բան հաւատոյ: Որովհետեւ ար-
ելեան և արևմտեան Եկեղեցիք զնոյն
հաւատ ունին թէ՝ որդին առաքէ առ մեզ
զհողին սուրբ՝ որ ի հօրէ ելանէ: Եւ ի վե-
րայ այսորիկ ամեն այն Եկեղեցիք միաբա-
նին:

Պապէս և արևմտեան և արևելեան Ե-
կեղեցիքն հաւատան միաբան սրաիւ թէ՝
կիսամասնեայ արդարոց հոգիքն զնան ի
տեղի մի տրտմութեան, ուր թօղութիւնն
ստանան մեղաց իւրեանց՝ աղօթիւք և ո-
ղորմութեամբ և պատարագօք կենդանեայ:
Խոկ զայս անուանեն իւրաքանչիւր աղդ
ըստ յատկութեան լեզուի իւրոյ, Հոռոմք,
Հայք, Վասորիք, Խոպտիք, Հապէշիք և Ե-

թէօպայիք կոչեն զայն տեղին հոգւոց կայանք։ Խսկ Լաթինացիք ասեն զնա՝ հոգւոց մաշրաբան։ Խւրաբանչեւր ըստ յատկութեան լեզուի խւրոյ՝ որպէս պատահեցաւ արձանին Յակոբայ նահապետին, և Լայանու աներ սորա, զոր ճառէ Վովսէս։ Խոկ այս անուանելոյ զայն տեղին՝ որ տրտմութեան, է մի այն զանաշանութիւն կերպից խօսելոյ, և ոչ զանազանութիւն հաւատոյ։ Որովհետեւ ամենեքեանքն միաբան ձայնիւ հաւատան զտեղի մի տրտմութեան ուր կիսամանեայ արդարոցն հոգիք կան։

Օսոյն ասելի է և վասն ամենայն իրաց՝ յորս զտ անին զանազանութիւնք ինչ ի մէջ մեր և ի մէջ ազգաց քրիստոնէից։ Քանզի այն ամենայն զանազանութիւնք են կերպից խօսելոյ և բառից, և ո՛չ հաւատոյ։ Խսկ հարցանիցես թէ՝ ի մէջ այս զանազան կերպից խօսելոյ՝ ո՞րն կերպ խօսելոյ է Ճշմարիտ։ Պատասխանեմ թէ՝ ամենեքեան Ճշմարիտ են ի սեփհական լեզու իւրեանց։ Քանզի զորօրինակ ձայոց, Վորոյ և ամենայն միաբնակ աղգաց մի բնութիւն ասելն ի Քրիստոս, զանազանէ ի լեզուս նոյա զանբաժանելի միացութիւն Վատու ածութեան և մարդկութեանն Քրիստոսի Վյո Ճշմարիտ է. ապա ուրեմն և մի բնութիւն ասելն Ճշմարիտ է ի լեզուս նոյա։ Վանապէս և Հոռոմոց և Լաթինացոց՝ երկու բնութիւն ասելն ի Քրիստոս, նշանակէ ի լեզուս նոյա զանցիոթութիւն Վատուածութեան և մարդկութեանն Քրիստոսի։ Խսկ այս Ճշմարիտ է. ապա ուրեմն և Բ բնութիւն ասելն Ճշմարիտ է ի լեզուս նոյա։

Օսոյն ասելի է և վասն այլոց զանազանութեանցն, թէ իւրաբանչեւր զանազան

կերպին խօսից Ճշմարիտ են ի սեփական լեզուս իւրեանց։ Խսկ այս զանազանութիւնս կերպից խօսելոյ՝ ո՛չ բառնայ զմիութիւն Կաթուղիկէ Եկեղեցւոյն։ Քանզի առ միութիւնն Կաթուղիկէ Եկեղեցւոյն կայանայ հաւատոյ միաբանութիւն, և ոչ լեզուաց և իմաստափրական բառից։ Պասն այն և Պօղոս Վուաքեալն խօսելով զմիաբանութենէն քրիստոնէից ասէ՝ փութացէք պահել զմիաբանութիւն հոգւոյն յօղիւ խաղաղութեան։ մի մարմին և մի հոգին որպէս և կոչեցայք ի մի յոյս կոչման ձերոյ, մի Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն, մի Վատուած, և Հայր ամենեցուն։

Տեսանե՞ն ո՞վ ընթերցող՝ թէ որպէ՞ն առաքեալն զոր ինչ հարկաւոր է հանրական Եկեղեցւոյն։ համարէ։ Ո՛չ ասէ՝ մի լեզու, մի կերպ խօսից, այլ միայն ասէ՝ մի յոյս կոչման ձերոյ, ևայլն. զոր ի վերոյ ասաց։ Քանզի այն անօթն ընտրութեան լաւ գիտէր՝ որ առ միութիւն ընդհանրական, ո՛չ հարկաւոր է միաբանութիւն կերպից խօսելոյ. այլ բաւական է միաբանութիւն հաւատոյ։ Վրդ յետ այսորիկ այլ զի՞նչ առնել կամիս ո՞վ ընթերցող. երբ տեսանե՞ն թէ լցեալ հոգւով սրբով առաքեալն ուսուցանէ մեզ թէ՝ առ միաբանութիւն ընդհանրական Եկեղեցւոյն հարկաւոր է միաբանութիւն հաւատոյ, և ո՛չ թէ կերպից խօսելոյ։ Վրդ՝ ասա՛ ինձ զի՞նչ կարես տալ ոյատասխանի այսմ անյաղթելի Ճշմարտութեանս։ միթէ՞ ասես Պօղոս առաքեալն ո՛չ գիտէր զի՞նչ խօսէր. զի տգէտ էր։ Կամ թէ գիտէր՝ սակայն ոչ յայտնէր՝ կամէր խարել զմեղ։ Օայս ասելն է հայհոյութիւն ընդդէմ հոգւոյ

սրբոյ, որ խօսէր բերանովն Պօղոսի: Ի՞այց թէ ո՛չ կարես ասել, դաւանեա՛ ուրեմն ըստ Պօղոսի, որ ի միաբանութիւն քրիստոնէից բաւական է, զի ամենեքեան զմի հաւատ ունիցին:

Ուստիյայտ է թէ՝ Հայք, Ասորիք, Խորտիք, Հապէշք, Եթէօպացիք, Հռոռուք, և Լաթինացիք, ամենեքեան ի միասին զմի միայն ընդհանրական Եկեղեցի կացուցանեն: Քանզի ամենեքեան զմի և զնոյն հաւատս ունին: Եւ ամենեքեան դաւանին զմի և զնոյն հաւատամքն՝ զոր շնորհին ամենայն սուրբ Հայրապետքն ի Նիկիայ, և ի Առատանդնուպօլիս: Եւ որ այլ ամենայն հետեւալ ժողովքն դաւանեցին և հաստատեցին ասելով թէ ամենայն բանք հաւատոյ որ՝ հարկաւորք են վասն փրկութեան մերոյ, գտանին լիապէս ի մ.ջ հաւատամքիս, և նզովեցին զնոսա որք իշխեցին փոփոխել, յաւելուլ կամ պակասեցուցանելբան մի յայս հաւատամքէս: Այս է հաւատոքն ամենայն քրիստոնէից, յորոյ վերայ ամենայն Եկեղեցիքն միաբանեն: Թէպէտ զանազանին ի միմեանց ի կերպս խօսելոյ վասն զանազանութեան լիզուաց իւրեանց:

Օխարդ հնար է այնքան զանազան ազգաց՝ որք ո՛չ գիտեն զիւզուս միմեանց կարող լիցին ունել զմի և զնոյն կերպս խօսելոյ: Ապա ուրեմն պարտ է ասել թէ առ միութիւն ընդհանրական Եկեղեցւոյն ոչինչ հարկաւոր է միաբանութիւն կերպից խօսելոյ, և թէ զանազանութիւն բառից ոչ երբէք բառնայ զմիութիւն Եկեղեցւոյն Վրիստոսի: Եւ թէ ո՛չ, ապա ուռ լինէր Վրիստոս՝ որ ասէրի բանս իւր

թէ՝ ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հօտ միոյ հովուի, որ եմ ես: Քանզի ասէ թէ՝ ես եմ հովիւ քաջ: Օխի թէ ամենայն ազգ վասն զանազանութեան լիզուաց ոչ են մի հօտ և մի Եկեղեցի, ապա Վրիստոս ասելով՝ եղիցին մի հօտ, կամ տգէտէր, ոչ նախատես լեալ է այսմ զանազանութեանս. կամ գիտէր, սակայն ո՛չ կամէր ասել, զոր քաւ լիցի ասել, կամ զմբաւաւ ածելզցաւալի հայհոյութիւնս. վասն այսորիկ որով ո՞րպիսի զարհութելի հայհոյութիւնս ոչ ևս կարէ անկանիլ ի միտու քրիստոնէի միոյ: Ապա պարտ է ասել թէ՝ Վրիստոս թէպէտ յառաջ գիտութեամբ իւրով տեսանէր զայս զանազանութիւնս, սակայն այս ո՛չ արգելոյր զմիութիւն հօտին իւրոյ. վասն այնորիկ ասէր եղիցին մի հօտ միոյ հովուին: Քանզի ի միութիւն հօտին Վրիստոսի հարկաւոր է միայն զի ամենեքեանքս ունիմք զմիմիայն հովիւ զՏէրն մեր Յիսուս: Որ է հովիւ քաջ, և ամենեքեանս լուիցելք ձայնի միայն հովուին այնորիկ. պահելով զմի հաւատն մեր, և կատարելով զմի օրէնս նորա, որ է սէրն եխաղաղութիւնն ընդ միմեանս: Օխ որպէս բազում և զանազան ոչխարք որոց ոմանք գեր են, և ոմանք նիշարք, ոմանք սպիտակ, ոմանք սեաւ, ոմանք մեծ, ոմանք փոքր, սակայն ամենեքեան մի հօտլինին ի միասին, և միութիւն հօտին նոցա կայանայ միայն առ ի ունել զմի հովիւ՝ որում հետեւին լոելով ձայնի նորա: *Վամանապէս և քրիստոնեայք՝ թէպէտ ոմանք միաբնակ, ոմանք երկաբնակ, ոմանք միակամ, ոմանք երկակամ. սակայն ամենեքեան լինին մի հօտ՝ երբ ունին զմի միայն հովիւ զՏէրն մեր Յիսուս Վրիստոս, ունելով զմի հաւատն

և զմի օրէնս նորաւ Ա ասնայսորիկ և Տէրն ասէր՝ ես եմ հովիւ քաջ, և ոչխարք իմ ձայնի իմում լսեն և եղիցին մի հօտ և մի հովիւ Դարձեալ Տէրն յորժամմերձեալ էր ի մահն փրկական, համբարձեալ զաշս իւր յերկինս, աղօթէր առ հայր ասելով՝ հայր՝ աղաչեմ զքեզ վասն ամենայն հաւատացելոց յիս, զի ամենեքեան մի իցեն: Երդ՝ զե՞նչ ասես առ այս, որ ուրանաս զմիութիւնն քրիստոնէից. մի՞թէ այս աղաչանքս Քրիստոսի ո՞չ եղեն լսելի հօր: Քանզի թէ զանազանութիւն խօսից իրաց բառնայ զմիութիւն նոցա, ուրեմն աղաչանքն Քրիստոսի ոչ եղեն լսելի հօր. և հայրն ոչ ընկալաւ զխնդրուածս Միածնի որդւոյ իւրոյ. ճ՛հ զարհօւրելի հայհութեանս. տե՞ս՝ թէ որքան խելագարիս այդպիսի անիմաստ բանիւքդ: Ապա ուրեմն զգոյշ լեր ի բաց ձգեա՛ զխելագարութիւնը, և ձանաչեա՛ զշմարիտն և հաւատա՛ զի ամենեքեան արևելեան և արևեմտեան Եկեղեցիքն միենոյն հաւատ ունին. և եղբարք գոլով՝ ամենեքեան են ուղահաւատ և Կաթուղիկէ:

Ե հաւասիկ լուծումն ամենայն հակածառութեանց և կուոյ. որք ի վաղուց հետէ վասն ընդունայն և չնչին իրաց վրդովեն և պատառեն զխեղձ ազգն մեր. ո՞չ ոք է վառեալ սիրովն Քրիստոսի՝ որ ջանասցէ զհուրն վրդովմանց: Եյլ ոմանք ի նախանձու, և ոմանք ի սիրոյ փառաց, փոխանակ ջրոյ իւղ և ծծումք արկանեն վասն առաւելութեան հրոյն. ո՞հ թշուառութեան ժամանակիս. վկայ է Աստուած ի հոգի իմ որ զայս մեկնութիւնս զանազանութեան լեզուաց առ բերի, ոչ ի սիրոյ աղջին իմոյ, և ո՞չ ի նախանձու, և ո՞չ վա-

սըն հաճելոյ Գուանկաց, այլ միայն վասն սիրոյ Ճշմարտութեան. զոր հրամայէ Քրիստոս վասն դանձու տանն Աստուծոյ, զոր տեսանեմ այսօր պատառեալ և երերեալ յաղագս ընդունայն իրաց, և ողբամզի և նոքա որոց պարտն էր ջանալ խաղաղացուցանել զիշկեղեցին Քրիստոսի. իսկ նոքա առաւել հրդեհեալ աւերեն զնաի ձեռն ընդունայն հակածառութեանց իւրեանց:

Եւ զիտեա ո՞վ ընթերցող. այս մեկնութիւնս ո՞չ եթէ նոր լինել ի գլուց իմմէ այլ յառաջ քան զիս բազում սուրբ հայրապետք և վարդապետք ամենայն աղգաց զսոյն զայս մեկնութիւնս արարեալ են: Ասէ սուրբն Կերսէս շնորհալնն ի Յիսուս որդին և առ Մանուէլ կայսրն՝ Հռոմուց ի թուղթսն իւր: Սուրբն Կերսէս Լամբրոնացին յատենական բանս իւր առաջի ժողովոյն Տարսոնի: Եւ Գրիգոր Ապօւղիկոսն ամենայն հայրապետոք Տարսոնի ժողովոյն Հայոց ի պատասխանիսն առ խնդիրսն Հռոմուց: Այսպէս և Եւազրոս ամենիմաստ պատմիչն Հռոմուց, խօսի ի բազում տեղիս պատմութեանց իւրոց: Այսպէս խօսին ամենայն իմաստունքն և աստուածաբանքն վարդապետք Լաթինացւոց: Կոքա՝ որ զիտեն զմիտս արևելեան քրիստոնէից. ասեն յայտնապէս թէ՝ արևելեան քրիստոնեայքն ո՞չ իւիք հերձուածողք են, այլ ամենեին ուղղահաւատ, և Կաթուղիկէ են: Թէպէտ վարդապետութիւնն և կարծիքն նոցա զանազանք են ի մէնջ, զորօրինակ Լեռն Ալլատիոս վարդապետն ի զիրքն իւր՝ որ կոչէ միաբանութիւն արևելեան և արևեմտեան քրիստոնէից, ցուցանէ յայտնապէս թէ արևե-

լեան քրիստոնեայքն ո՛չ իւիք հերձուածողք են, և յոյժ բարկանայ ընդդէմ ումանց անիմաստ վարդապետաց որք իշխեն հերձեղ կոչել զարևելիան քրիստոնեայսն. ուստի և կոչէ զնոսա տգետք, չարաբանք, զրախօսք, ստասացք, և այլ սոյնազիսիս: Ասպէս ամենիմաստ աստուածաբանն Պուկաս Նորդինիոս գլխաւոր պահապան զըրատանն Փափին ի գիրս իւր՝ որ տպագրեացն հրամանաւ Գյուանչիսկոս պարսկէրինս կարդինալի, և ասէ անդ թէ պատճառն ողբալի բաժանման արեւելիան և արեւմուեան Խկեղեցւոյ, մեր Գյուանկաց վարդապետքն են. քանզի սոքա ոչինչիւիք հոգան զջմարտութենէն և ոչ զսիրոյ՝ զոր պարտ է նոցա առնել վասն եղբարց իւրեանց, այլ միայն խնդրեն յաղթել զայլս, և հրամայել զի՞նչ և կամիցին, և այսպէս բորբոքեալ սատանայական ցանկութեամբ հակաձառելով և յաղթելով զայլս առաւել վառեն ի մէջ Խկեղեցւոյ զհուրն բաժանմանց: Օայս ամենայն ասէ այն ամենիմաստ վարդապետն Պուկաս: Ասպէս և Ճ'ենեպարտոս աստուածաբանն, որ էր ուսուցիչ Աստուածաշունչ զրոց, և Շվիայանաց ի Փարէզ քաղաքն Թրանսալու, և յետոյ վասն մեծի իմաստութեան իւրոյ եղել Ալքեպիսկոպոս Աքուառու. սա ի չորրորդ գիրս իւրոյ ժամանակագրութեան, ի պատմութեան ՈՒՃՌ. թօւականին Քըրիստոսի ասէ՝ որք Նոյոց հերձուածող ասեն, այնպիսիքն մոլորին ի զջմարտութենէ, զի Նոյոց ասեն ի Քըրիստոս Տարնութիւն, Յիմօնն, որ տեղեակ է ամենայն լեզուաց և զրոց արեւելիան քրիստոնէից, և որոյ իմաստութիւն հոչակեալ է ընդ ամենայն արեւմուտոս վասն բաղում գրեանց զոր շարադրեալ է ի վերայ Աս-

որպէս բնութիւն ըստ Արիստոտելի երբեմն նշանակէ բաղկացեալ իր մի, երբեմն նըշանակէ զի մասն բաղկացեալ իրին: Այսպէս և Նոյոց երբ երկու բնութիւն ասեն ի Քըրիստոս, կամին ասել զերկու մատունս Քըրիստոսի, որ է Աստուածութիւն և մարդկութիւն, և երբ ասեն մի բնութիւն, կամին ասել մի Քըրիստոս, կամ մի անձն Քըրիստոսի միաւորեալ յերկուց բնութեանց: Այլ և օրինակ բերեն զմարդն, յորում կան երկու բնութիւն, մարմին և հոգի, և կայ ևս մի բնութիւն՝ որ է մարդըն միաւորեալ ի մարմնոյ և ի հոգւոյ: Ապա ուրեմն Նոյոց ազգն հետի է հերձուածոց, նմանապէս և չէ պարտ հերձուածող ասել Ասորոց, Մոլոնեաց, Նապէշից, Խապոց Խթէօպացւոց, Վրաց՝ զի այնք ամենայն եկեղեցիքն ուղղամիտ են և կաթուղիկէ, և ոչ իւիք զանազանին ի մէնջ ի բանս հաւատոյ:

Այսպէս և պատրի Փիլիպոսն ի կարդէն կարմիկթանայ, խօսելով զՆոյոց ի պատմութեան ձանապարհորդութեան իւրոյ, ասէ թէ Նոյոց ասեն մի բնութիւն ի Քըրիստոս, երբ մեկնեն նոքա զմիտս իւրեանց երեւի յայտնապէս՝ որ ոչ է մոլորութիւն, զի նոքա ասեն մի բնութիւն, վասն զի ոչխօսին ըստ սովորութեան մերոյ, ուստի Նոյոց զանազանին ի մէնջ ոչ թէ ի բանս հաւատոյ. այլ ի կերպս խօսելոյ:

Ամանապէս և մեծ աստուածաբանն Թրանկազանց քահանայն Նոյոց ական Խկեղեցւոյն, Տէր Ոիմօնն, որ տեղեակ է ամենայն լեզուաց և զրոց արեւելիան քրիստոնէից, և որոյ իմաստութիւն հոչակեալ է ընդ ամենայն արեւմուտոս վասն բաղում գրեանց զոր շարադրեալ է ի վերայ Աս-

տուածաշունչ զրոց ընդդէմ լօթրանաց։ Եա զբեաց և Ծ զիրք վասն կրօնից արեւելցւոց, ուր ցուցանէ թէ՝ կարծեալ մոլորութիւնքն արեւելեան Ակղեցւոյ, ոչ են ծշմարիտ. քանզի ասէ նոքա զանազանին ի մէնջ՝ ոչ թէ ի բանս հաւատոյ, այլ ի կերպս խօսելոյ։ Օի ո՛չ զիտեն զբառս և զլեզուս մեր՝ վասնորոյ ոչ կարեն խօսիլ ըստ սովորութեան մերում։ Աւ յայլում տեղւոջ նոյն աստուածաբանն յոյժ կըշտամբէ զջրանկ վարդապետսն որք շրջին յարեւելս, և անխմաստ բանիւք իւրեանց առաւել բորբոքեն զթշնամութիւն և զբաժանումն արեւելեան և արեւմտեան Ակեղեցեաց. քանզի ասէ փոխանակ ցուցանելց թէ միւնոյն հաւատ ունին ընդ մեզ, նոքա տգէտք ևս նախանձաւորք ջանան միայն ի զուր բամբասել զարեւելցիսն, և չարախօսել զնոցանէ ստախօսութեամբ թէ հերձուածողք են, երբ նոքա, և ո՛չ ըստ ուերս ինչ ունին հերձուածողութեան, և ոչինչ տեսանեն ի մէջ ոցա զանազանիսով վորութեանց մերոց, վաղվաղակի առանց քննութեան ազազակեն թէ այս հերձիկէ, որպէս երեխ յայտնապէս ի զիրս այնոցիկ, որք զրեալ ընդդէմ Երեւելցւոց, և ոչ զիտեն տգէտքն և դատարքն՝ թէ արեւելեան Ակեղեցիքն ունին զայն ամենայն աւանդութիւնս յառաջ ժամանակաց անտի սրբոցն Եմանասի, Կիւրզի, Յովշաննաւ Ուղերեր սնին, և այլոց յառաջնոց աւանդութեանց։ Երբ ոչ արեւելցիքն, այլ մեք արեւմտցիքս իսկ փոփոխեալ եւք և մածեալք ըստրաձե վարդապետութիւնը։

Եյսպէս խօսին և այլ բազում աստածաբանք վարդապետք Լամբինացւոց,

նոքա որք զիտուն են և իմաստունք, և որք ըստ պատուիրանին Վրիստոսի զջրշմարտութիւնն և զիաղաղութիւնն ե զսէրըն խնդրեն քրիստոնէից, և ոչ թէ զյաղթութիւն կամ զիտոս աղղին իւրեանց և ոչ զրդեցեալ են ի բարկութենէ, կամ ի թշնամութենէ։ Երանի թէ Ձռանկաց վարդապետքն, որք յերկրիս մերում, յառաջ քան զգնալն իւրեանց յարեւելս, ընթերցեալ լնէին զգրեանս վերոյգրեալ աստուածաբանից. Ճշմարիտ յայնժամ ո՛չ տեսանէաք յերկրի մերում զայնքան խըսովութիւնս՝ զոր յարուցանեն նոքա ի վերայ մեր տղիտութեամբ և ասիմաստութեամբ իւրեանց։

Երդ՝ յայս ամենայն վերոյգրեալ բանիցս յայանի լինի. նախ և առաջին առմութիւն Կաթուղիկէ Ակեղեցւոյն ըստ Պօղոսի, ո՛չ հարկաւոր է միաբանութիւն կիրապից խօսելոյ, այլ հարկաւոր է միաբանութիւն հաւատոյ։

Երկրորդ՝ թէ մեծ հայհոյութիւն է ընդդէմ Վրիստոսի ասելն թէ արեւելեան և արեւմտեան Ակեղեցիքն ոչ են մի հօտ և մի Ակեղեցի։

Երրորդ՝ թէ ըստ վկայութեան սրբոց հարց և աստուածաբան վարդապետոյ. արեւելեան և արեւմտեան Ակեղեցիքն զանազանին ի միմեանց ի կերպս խօսելոյ, և միաբանին ի բանս հաւատոյ։ Երդ՝ յետ տեսանելոյ կարճառօտ բանիւք զայս յայտնի ճշնարտութիւնս. մի՞թէ ոչ պարտ է քել հաւատալը զոր աստուածաշունչն և Պօղոս առսքեալն, սուրբ հարք և աստուածաբան վարդապետք՝ և միաբան ձայնիւ ուսուցանեն՝ որպէս ցուցաք ի վերոյ. թէ միութիւնն ընդհանրական Կաթու-

զիկէ Խկեղեցւոյն, ո՞չ կայանայ ի միաբանութեան կերպից խօսելոյ, այլ կայանայ ի միաբանութեան հաւատոյոյ Խւթէ արևելեան և արևմտեան քրիստոնեայքն միմիայն Կաթուղիկէ Խկեղեցւոյ որդիք են, թէպէտ զանազան ի կերպս խօսելոյ: Ո՞չ թէ քրիստոնեայք խնդրելով՝ ո՞չնչ հոգային զզանազանութենէ կերպից խօսելոյ, ծշմարիտ ի վաղուց հետէ ամենայն քրիստոնեայք եղբայր և միաբան լինէին ընդ միմեանս: Խւտ տնկեալ տեսանէաք ի մէջ քրիստոնէից և զմիաբանութիւնն և զեղբայրսիրութիւնն, և այսպէս ամենէքեանքը կարէաք պահել զօրէնս Վրիստոսի, որ է սէրն և խաղաղութիւնն, առանց որոց ոչ ոք կարէ քրիստոնեայ լինել. քան զի օրէնքն Վրիստոսի սէրն է. ըստ այնո՞ւ պատուէր նոր տամ ձեզ՝ զի սիրեսջիք զմիմեանս: Խսկ ամենաչարն սատանայ՝ որ միշտ բարեացն է հակառակ, ո՞չ դադարէ ի սերմանելոյ ի մէջ քրիստոնէից զըրո՞ն ատելութեանց վասն ածելոյ զքաղումս ի հուրն դժոխոց. մանաւանդ զայնոսիկ՝ որ տղիտութեամբ իւրեանց պատճառ լինին խոռովութեանց քրիստոնէից: Ո՞չ թշուառութեանց նոցա՝ որ երբ կարծեն խնդրել զուղահաւատութիւն և զիաթուղիկէութիւնն, նոքա զքրիստոնէութիւնս իւրեանց ևս կորուսանեն վըրովիելով զխաղաղութիւնն Վրիստոսի, և գայթակղեցուցանելով զհաւատացեալմն: Ճ՛շմ՛ը իւր լսաւ լինէր նոցա ըստ ասելոյ Փրկչին մերոյ թէ վէմ երկանաքար, կախէին զպարանոցի իւրեանց և անկանէին ի ծով: Ճէ մարթ չգալ գայթակղութեան, բայց վայ այնմիկ է յոյր ձեռն գայցէ: Ճ՛շմարիտ ո՞չ գիտեմ թէ զինչ են պատասխան տալոց

նոքա յաւուր դատաստանի, երբ Տէլն մեր Յիսուս՝ ցուցանէլով նոցա զխալն և զարիւնն իւր, ասելոց է նոցա իւրաքանչիւրում: Տէսանե՞ն անիրաւ զայս արիւնս՝ զոր հեղի վասն խաղաղութեան հաւատացելոց իմոց ի խաչին. իսկ դու անիմաստ հակամառութեամբ քով գայթակղեցուցեր զնոսա. վըրովիցեր զխաղաղութիւնն, ցամաքեցուցեր զսէրն, և արկեր զաղմուկս և զխոռվութիւնս ի մէջ քրիստոնէից. առնուն իմ հայհոյի ի մէջ հեթանոսաց, որպէս և գրեալէ: Փոխանակ առ ի հոդալոյ պահել զպատուիրանս իմ, փոխանակ ասելոյ թէ մէք ամենէքեանս եղբարք եմք, թէ Ճայ, թէ Ճոռոմ թէ Լաթինացի, և փոխանակ հաստատելոյ վեղբայրսիրութիւն ի մէջ քրիստոնէից. դու հպարտութեամբ քով բորբոքեցեր զատելութիւն և զթշնամութիւն, կոչելով զեղբարս քո հերետիկոս առանց պատճառի, երբ նոքա զնոյն հաւատն ունին, զոր և դու ունիս: Ո՞չ զիտեմ թէ զինչ ասասցեն առ այս հազին բանս Վրիստոսի, երբ ասասցեն թէ մէք կամէաք ուսուցանել այլոց զճշմարտութիւն, ո՞չ ապաքէն ասասցէ նոցա Վրիստոս՝ ծառայ չար և վատ՝ մի թէ գոյ այլինչ ճշմարտութիւն բաց յաւետարանէ իմմէ, յորո՞ւմ տեղլոջ հրամայեցի ես երկու բնութիւն ասել, այլ մանաւանդ անթիւ անգամ ասացի թէ պարտ է քրիստոնէից լինել խաղաղաբար. վայ ասացի մարդոյն յոյր ձեռն գայցէ զայթակղութիւն: Եհա ճշմարտութիւն՝ զոր ասացի ես յաւետարանի իմում, որոց պարտէր քեզ հետեկիլ, և ուսուցանել այլոց: Իսայց դու յանդգնեալ ընդդէմ պատուիրանաց իմոց՝ ապախտ արարեր զամենայն զհրամայեալսն

իմ, և զոր ոչն հրամայեալ, զայն ի դործ արկեալ պատճառ եղեր խռովութեանց: Եթէ ասասցեն նոքա մեք կամեաք զեղբայրսիրութիւն առնել ընդ այլ պազս քրբիստոնէից, ասասցէ նոցա Քրիստոս՝ ով անմիտք՝ մի՛թէ, դուք ո՛չ կարեիք առնել զալս ունելով մեծ իմն սէր վասն ամենայն քրիստոնէից, ամենեքեանս եղբայր եմք ասելով, և թարց պատճառի ոչ սսել հերձաւածող՝ և այսպէս պատճառեալ զպատմութանն իմ՝ որ է հաւատացեալքն: Խսկ գուցէ ասասցեն թէ, այսպէս ուսուցին մեղիմաստուն վարդապետք: Պատճառս այս որպէս՝ կարէ ընդունելի ինսել առաջի Աստուծոյ, երբ նա զգուշացոյց ի սուտ մարգարէից Եկեղեցւոյ հանդերձիւք ոչխարաց ի ներքը գայլ գորով յափշտակօղք, ի պրողոյ նոցա ասէ ծանիջիք զնոսա: Խսկ պտուղ հոգւոյն այս է ըստ Պօղոսի, սէր, խաղաղութիւն՝ իսկ պտուղ սատանայի և մարմնոյ է նախանձ և երկպառակութիւնք, մի՛թէ ոչ պարտ էր ձեզ ծանաչել ասէ Քրիստոս զվարդապետութիւն ի պաղոյ նոցա՝ որպէս հրամայեցի ձեզ: Եւ հետեիլ միայն այնոցիկ՝ որք խաղաղասերքն են: Եւ իրաց ձգել զբանս նոցա որք պատճառ են վողովմանց և հակառակութեանց: Խսկ գուցէ ասսցեն նոքա՝ մեք ոչ գիտէաք զայս ձշմարտութիւնս: Բայց ոչ կարեն, ոչ ապաքէն քրիստոնեայ են՝ եթէ քրիստոնեայ են, ընդէր ոչ գիտեն զպատռիրանն աւետարանին, և ընդէր ոչ հետեին նմա: Խսկ գու ով սիրելի ընթերցող թէ, և դու միո՞ն ի նոցանէ ես՝ դու զինչ պատասխանի տաս Քրիստոսի: Երբ ընթերցեալ զայս ամենայն վերոյգրեալ ձշմարտութիւնս: Օգոյշ լեր այսուհետեւ եղբայր՝ աղա-

չեմ զքեզ վասն սիրոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի բաց ձգեալ զանշահ և զընդունայն վիճարանութիւնս: Հոգաս ջեր միայն զիրկութիւն հոգւոյ քո՛ պահելով զհրամանն աւետարանին, որ հարկաւոր է և շահաւետ քեզ:

Ավ եղբայր՝ զի՞նչ օգուտ է քեզ՝ թէ զաշխարհ շահեսցես և զանձն քո տուժեացես: Օի՞նչ օգուտ է քեզ հակառակիլ վասն փիլիսոփայական բանից, աստուածաբան և իմաստուն երեիլ սակայն պատճառ լինելով խռովութեանց զհողիդ կորուսանելով:

Եհան երանի առաջին ժամանակացն քրբիստոնէից, և աշակերտաց առաքելոցն, որ միամիտ սրտիւ առանց հակառակութեան հաւատացին զամենայն զոր ինչ զրեալ էր յաւետարանն: “Եոքա զիտէին միայն նահատակիլի վերայ հաւատոյ: “Եոքա խընդրէին միայն պահել զօրէնս Քրիստոսի, որ է սէրն: Այսպէս պարտ էր վարիլ ամենայն քրիստոնէից՝ թէ ունկն զնէին բանից աւետարանին:

Խեղձ և անմիտքն հակառակ ենի վերայ անշահ և ընդունայն իրաց, և ո՛չ երբէք խորհին զայնցանէ՝ որք ածեն զմեզ յարքայութիւն, կամ ի զժոխս: Օորորինակ Տէրն մեր Յիսուս ասէ՝ զիւրագոյն է մաշխոյ ընդ ծակ ասզաւանել քան մեծաւան յարքայութիւն Աստուծոյ մանել: Եւ հարցողին թէ զի՞նչ արարից՝ զի զիեսնըս յաւիտենականս ժառանգեցից. յայնժամ Յիսուս յետ հրամայելոյ նմա զպատռուիրանն, ասէ միւս ևս պակասէի քէն. զորինչ ունիս վաճառեա և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս: Եհան յորոյ վերայ պարտ էր քրիստոնէից հա-

կամառել և քննել . միթէ ստուդի՛։ ի հարկէ պարտ է քրիստոնէից զամենայն ինչքս իւրեանց տալ աղքատաց, թէ ո՞չ՝ իսկ անմիտք թողեալ զբանս զայս հարկաւորս, և ի վերայ անշահ բանից հակառակին։ Վկա անմիտ՝ յո՞ր տեղւոջ ասաց յաւետարանին Քրիստոս՝ թէ պարտ է երկու բնութիւն ասել՝ զի զկեանսն յաւիտենականս ժառանգեսցէ։ Խոկ ահա՝ յայտնապէս յետ պահելոյ զպատուիրանսն Աստուծոյ, միւս ևս պակաս է քեզ վասն ժառանգելոյ զարքայութիւնն Աստուծոյ, այսինքն զվաճառումն ընչեց և տալ աղքատաց։ Խոկ դու զանց առնես զայն՝ զոր հարկ է քեզ վասն ժառանգելոյ զկեանս յաւիտենականս, այլ հետեւով հպարտութեան մտաց քոց, հակամառես ի վերայ իմաստասիրական բանից՝ զոր ո՞չ հրամայէ Քրիստոս զիտել։ Վկա խելտգարութեան քում, զի զհարկաւորսն թողուս, և զանգտուղմն խնդրես։

Զայս ամենայն զըեցի ասու՝ ո՞վ ընթերցող՝ ո՞չ թէ վասն արգելոյ զքեզ յիմաստասիրութենէ յուսուցման, այլ միայն վասն խրատելոյ զքեզ՝ թէ ո՞չ է պարտ քրիստոնէից ի վերայ ընդունայն իմաստասիրական կերպից խօսելոյ վրդովել զխաղաղութիւնն քրիստոնէից, որ է մեծ մեզք և հակառակ օրինացն Քրիստոսի։ Այլ պարտ է հաւատալ միամիտ սրտիւ զամենայն զորինչ ուսուցանեն մեզ Աստուածաշունչ զիրքն՝ որոց համառօտ մեխնութիւնն պարունակի ի մէջ հաւատամքին մերոյ։ Եւ յետ այսորիկ եթէ ունիցիս իմաստութիւն, ոչ է պարտ ի կիրառու զնա առ ի հակառակել ի վերայ անշահ իրաց, և արկանել զխուփութիւնս.

այլ միայն պարտ է քեզ ի կիր առնուլ զնա վասն փրկութեան հոգւոյ քո և այրց, և ընթեռնլով և մեկնելով զաւետարանն սուրբ և զայլ սուրբ զիրս, որք ուսուցանեն մեզ զսէր, զողորմութիւն, և զայլ առաքինութիւնս, և ջանասջիր հաստատել ի մէջ քրիստոնէից զսէր և զեղբայրսիրութիւն, ցուցանելով թէ՝ մեք ամենեքեանս եզրարք եմք, զի մի հաւատունիմք ամենեքեանս, և զանազանութիւնքն՝ որ երեխն ի մէջ մեր, միոյն զանազանութիւն լեզուաց է, և ոչ թէ հաւատոյ, և այսպիսի քաղցրավուր բանիւ խաղաղութիւն արարեալ՝ որդի Աստուծոյ կոչեցիս. ըստ անսուտ խոստման Փրկչին մերոյ։ Քանիզ պարտ է ամենայն որդւոյ լինելնըման հօրն իւրոյ. վասնորոյ ո՞չ կարեմք քրիստոնեայ լինել, եթէ ոչ նմանիցուք նմա։ Ուստի և Տէրն մեր Յիսուս ասէ՝ եղերուք կատարեալք որպէս և հայրն ձեր կատարեալ է։ Խոկ վասն նման լինելոյ Աստուծոյ, պարտ է մեզ խաղաղարար լինել, ըստ նմանութեան հօրն, որի Պօղոսէ Աստուած խաղաղութեան կոչ։ Ա ասնորոյ և Տէրն մեր Յիսուս՝ ի Յիսուս և մարգարեէն իշխան խաղաղութեան կոչ։ Ուստի և ի ծննդեանն հրեշտակք ասացին յերկիր խաղաղութիւն։ Աչ թէպէտ Քրիստոս ասէ՝ ո՞չ եկի արկանել զխաղաղութիւն, այլ զսուր. սակայն ոչ թէ վասն այն խաղաղութեան ասէ՝ զոր պարտ է քրիստոնէից պահել. այլ զայն ասէ՝ որ էարկ ի մէջ հաւատացելոց և անհաւատից։ Բայց վասն խաղաղութեան հաւատացելոց բազումս հրամայէ՝ թէ զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, զխաղաղութիւն զիմ թողում ձեզ, և թէ՝ պատուիրան նոր տամ ձեզ՝ զի սի-

բեսջիք զմիմեանս: Կման սպէս և առաքեալքն յամենայն ժամ զխաղաղութիւն քարովէին դնելով ի սկիզբն և ի վերջ թղթոց իւրիանց:

Երդ՝ գու ո՞վ ընթերցող եղբայր՝ թէ կամիս քրիստոնեայ լինել և որդի Վստուծոյ, պարտիս յամենայն զօրութենէդ ջանալ հաստատել զխաղաղութիւն. և ստել այնոցիկ՝ որք ասեն արեելեան և արեմթեան քրիստոնեայքն զանազանին ի բանս հաւատոյ. զայս արարեալ՝ ժառանգեսցես զարքայութիւնն՝ գու և նոքա՝ որք այդմ հետեին: Վանզի չիք փրկութիւն առանց սիրոյ, որ է օրէնքն Վրիստոսի, որպէս ցուցաք: Ո՞վ ոք հակառակութիւն արկանէ, այնպիսին հակառակ է օրինացն Վրիստոսի:

Ճ' շմարիս՝ արտասուք իմ ո՛չ զաղարին ցայդ և ցերեկ վասն խելազարութեան ազգին մերոյ՝ որ վասն ընդունայն և չնչին իրաց՝ պատառեն զմիմեանս, և ի վտանգի կործանման գնեն զբոյոր Ակեղեցին Հայոց: Ո՞չ կուրութեաննոցա. ա՞նմիտք՝ փոխանակ միաբան և միաբիրտ լինելոյ ընդ միմեանս առ ի կարող լինելոյ անվտանգ պահել զքրիստոնէութիւնն ի մէջ անհաւատից. գուք արրեալք յիմարութեամբ զմարմինս միմեանց ուտէք վիճելով ընդ միմեանս վասն Լեռնից և Փարիանոսից: Ո՞վ անմիտք, միթէ Լեռն և Փլարիանոսից ի խաչելեալ են վասն ձեր: Զ Պօղոսին յիշատակեցից. կամ թէ յանուն Լեռնի և Փլարիանոսի մկրտեցայք. սյլ ո՛չ կոչեք այսուհետե քրիստոնեայք, բայց Լեռնեանք և Փլար՝ անոսեանք: Ո՞չ թըշուառութեան ժամանակիս ո՞րպիսի ժամանակաց պատահցաք. զի հաւատացեալք:

մերկացեալ զանունն Վրիստոսի, և զանուն հերձուածող զգենուն: Ո՞ անմիտ Վաղատացիք ո՞նախանձ արար զձեզ ու հնաղանդել Ճշմարտութեան. ո՞ արքեցոյց զձեզ բաժակին այդպիսի խելազարութեան: Պօղոս առաքեալն կշտամբէր զքրիստոնեայսն ժամանակին իւրոյ, վասն զի հակածառեին ընդ միմեանս վասն զիխաւոր առաքելոցն. ոմանք ասելով թէ ես Կեփայեան. և ոմանք թէ ես Պօղոսիան. զի՞նչ ասէր նոցա Պօղոս՝ միթէ բա լանեալ ի՞նչ է Վրիստոս. միթէ Պօղոսի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ յանուն Պօղոսի մկրտեցայք: Խսկ գուք պատուեցէք զմիմեանս՝ ոչ թէ վասն զիխաւոր առաքելոցն. յաղագս որոյ և յանդիմանէ Հոգին սուրբ բեր անողին Պօղոսի: Այլ առնէք զայս վասն Լեռնի և Փլարիանոսի հերձուածողաց: Ո՞չ մեծի խելազարութեանս, Լեռն Ֆռանկաց պատրիարք է, և Փլարիանոսն Հոռոմոց: Եւ մեք Հայք վիճարանեմք ի մէջ մեր վասն նոցա. և այս մինչեւ ի մահ և ի կորուստ միմեանց, ո՛վ ամաչելի կուրութեանս, բարւոք առնեն Հոռոմոք և Ֆռանկք, երբ զմեզ Պօղծի անուանեն, առ ամօթոյ ձեր ասեմք. ոչ ապաքէն իրաւի արժանի եմք կոչել այսու անուամբ, երբ թողեալ զսեփհիհական իրս մեր՝ խառնակիմք ի մէջ պատրիարքաց նոցա, և երբ նոքա ի խաղաղութեան և ի հանգարտութեան դոլով, մեք վասն նոցա զմարմինս միմեանց ուտէմք: Ո՞չ ողբասցէ զմեզ Արեմիայ, կամ այլ ոք իրբեղ զցաւակից մարդարէ. զի զ ամրբոնացւոցն յիշատակեցից, փոխանակ խորհելոյ և վաստակելոյ ի միասին առ ի սկաշտապանել Դմթոսս և Աշկեղեցիս մեր, և ի զատա-

նել զնոսա ի պարտուց իւրեանց, զի մի ստորանկեալ կորնչին: Մեք խելագարքս զպարան ի վերայ պարտուց յաւելումք, վիճելով ընդ միմեանց վասն Լեռնից և Փլարիանոսից պատրիարքացն այլոց աղքաց: Ապա զիանդ ոչ եմք ողբոց արժանի: Քանզի Ռ.Փ.Ռ. տարի է որ Լեռն և Փլարիանոսն վախճանեալ են, և գուայժմը ուրն արկանես քննել և ջատագովել զի վաղուց հետէ մեռեալ մարդոն: Կոքայայնժամ դատեցան եպիսկոպոսական դատաստանաւ, բանն կատարեցաւ, ժամանակ նոցաէանց. քեզ զի՞ պէտք է կրկին նորոգել այժմ զկորւս և ի վտանդի դնել զնկեղեցիդ քո. դու միայն հոգա զհողիդ և զփրկութիւն քո, և պատրաստեա զհամարս՝ զորս տալոց ես Եստուծոյ դատաստանին, զայս միայն հոգասջեր՝ որ շատ լիցի քեզ. մեր հաւատն ոչ է ի Լեռն և ի Փլարիանոսն կագեալ, այլ ի Տէր Յիսուս Քրիստոս, որ ի խաչ ել վասն մեր. և յորոյ անուն մկրասեալ եմք. սատ միայն հաւատա և կեցցես: Ապօ թէ ոչ զի տեա ստուդիւ. որ վիճելով ընդ եղբարց քոց ի վերայ ընդունայն և սնոտի իրաց, և լինելով պատճառ հակառա կութեանց, որդի կորստեան և գեհենւոյն լինելոց ես:

Եյսպիսի յիմար հակաճառութիւնքն եղեն պատճառ կորստեան թագաւորութեան մերոյ, և լինելոյ սարուկ հեթանոսաց տերութեան: Մի՞թէ ոչ բաւական է մեզ այսքան թշուառութիւնքս, որ թարց թագաւորի և իշխանութեան ի զերութեան հեթանոսաց ցիր և ցան եղեալ պանդիստանամք: Եհա բոլոր Հայաստան, հանուրց հիւսիսականաց վեհագոյնն ի թշուառական և ի պանտուխոս բնակու-

թիւն է, դարձեալ վասն այսպիսի յիմար բանից:

Երդ՝ մի՞թէ զայս մեացորդս կորուսանել կամիք ո՞վ ամբարիշտք: Մի՞թէ ոչ բարու ոք առնէին նոքա, եթէ զբոլոր ազգս Հայոց ի սուր անցուցանէին իրրե զընտանի թշնամի:

Եյս է ուրեմն սէրն և նախանձն ձեր զոր պարտիք ունիլ վասն տէրութեանն Քրիստոսի: Տէրն մեր Յիսուս եհեղ զարիւն իւր սուրբ ի խաչին վասն տարածելոյ ընդ ամենայն աշխարհ զտէրութիւն իւր, և գուք ջանայք յիմարութեամբ ձերով բառնալ զտէրութիւն նորաւ Ապա այնուհետեւ անունն Քրիստոսի անծանօթ լինելոց է ի սուրբ տեղիմն. որ արեւամբ նահատկաց, և սրբոց ամենից ոռողեալք են: Ե՞յդ է երախասայիշելութիւն քո առ Տէրըն քո Յիսուս: Օարթի՛ր Մովսէս, և ողբա՛ կրկին արտասուօք զթշուառութիւնը Հայաստանեայց. ոչ թէ որպէս յառաջն. զի բարձաւ ի նմանէ թագաւոր և խորհրդական. ըսնզի զմեզ սովորեցոյց երկարութիւն գերութեան մերոյ այսպիսի թշուառութեանց. այլ ողբա՛ զվատնզն կործանման բովանդակ ազգիս մերոյ, և տէրութեանն Քրիստոսի բարձման յարեկեց, որ Ճշմարիտ լինելոց է վաղվաղակի, եթէ ոչ դարձցուք ի խելագարութենէս մերմ:

Երի՛ Աերսէս և ջանա ոտաննաւոր ողբավք քո Ճմեցուցանել զփիսս քարացեալ ազգիս մերոյ ընդդէմ միմեանց:

Կա և գու ո՞վ երանեալդ և մեծ Հայրապետ և լոյս Հայաստանեայց Տէր Գրիգոր, դարձո միւսանգամ զհայրական Եջտ ոռ յորդ սղ առ ի լուսաւորել զժողովուր-

դըդ քո, ոչ թէ վասն հաւատոյն Քրիստոսի, այլ զայս ունիմք աղօթիւքդ անարատ մինչև ցայսօր՝ որպէս ուսաք ի գէն. այլ քարոզեա՛ մեզ զսէրն և զխաղաղութիւն ընդ միմեանս:

Երժ՝ վերջ արարից ողբոցս յիշեցուցանելով զբանս Պօղոսի՝ որ գոլով ի կապանս և ի շղթայս, գրէր առ Խփեսացիսն ասելով աղաւեմ զձեզ՝ ես որ կապեալս եմ ի տէր, արժանի գնալ կոչմանն, յոր կոչեցայք՝ այսինքն թէ վասն կապանաց և շղթայից և չարչարանաց՝ զոր կրեմ վասըն ձեր, խնդրեմ ի ձէնջ որդեակը իմ, սա լիցի ինձ սփոփումն ի տանջանս իմ, որ դուք արժանի կացջէք հաւատոցն Քրիստոսի՝ յոր կոչեցայք: Եւ յետոյ ցուցանէ, թէ զի՞նչ է արժանի կալն հաւատոյն Քրիստոսի. ասէ փութացէք պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան, մի մարմին և մի հոգի. որպէս կոչեցայք ի մի յոյս կոչեցելոյ. այսինքն թէ այնպէս միաբան և միախորհուրդ լերուք ընդ միմեանս. որպէս զի այնպէս կարծիցիք թէ ամենեքեանդ մի մարմին, մի հոգի և մի անձն էք:

Երդ՝ և ես զնոյնն աղաւեմ զձեզ եղբարքը ոչ թէ վասն կապանացն Պօղոսի, այլ վասն չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Փութացէք պահել զսէրն Քրիստոսի զոր հրամայեաց մեզ. և ծանիցիք ամենեցուն թէ դուք աշակերտը Քրիստոսի էք:

Վասնորոյ ի բաց ձգեցէք այսուհեան զամենայն անշահ վեճաբանութիւնն. և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս լերուք ամենեքեանքդ մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցայք ի մի յոյս կոչման ձե-

րոյ: Օայս արարեալ և դուք հանգիստ երջանիկ լինիցիք և Սատուածն խաղաղութեան հաշտեսցի ընդ ձեզ:

Դառեն պատմագիրք թէ Յովհաննէս Եւետարանին զոլով ի վերջին ծերութեան, ոչ այլ ինչ քարոզէր աշակերտացըն, քան թէ ո՛րդեակք սիրեցէք զմիմեանս. և երբ աշակերտքն հարցին ցնաթէ ընդէր հանապազ մի և նոյն բան ասէր և ոչ խօսէր զայլ ինչ իրաց. նա պատասխանի տայր թէ երբ օրէնքն Քրիստոսի սէրն է, և որ սիրէ զամենայն օրէնսն կատարէ:

Երդ և դուք եղբարք՝ եթէ կամիք ճըշմարիտ քրիստոնեայ լինել, սիրեցէք զմիմեանս մի՛ ասեր թէ այլ ազդք քրիստոնէից ատեն զմեզ և հերձուածող անուանեն, վասնորոյ և ես ատեմ և հերձուածող անուանեմ:

Ե՞՞ եղբայր՝ թէ նոքա գնան ի դժոխս, մի՛թէ և դու հետևիս նոցա. ոչ ապաքէն մեծ յիմարութիւն է՝ թէ այր մի տեսեալ զթշնամին իւր անկեալ ի ծով՝ նաև զինքն արկանիցէ ի ծով ատելով թէ թշնամին իմ ձգեաց զինքն ի ծով, վասնորոյ և ես անկանիմ ի ծով առ ի յագեցուցանել զթշնամութիւնն իմ: Օայս առնես դու ով եղբայր, երբ ատես զեղբայր քո՝ վասն զի նա ատէ ըղքեզ. և այսպէս արկանես զքեզ ի դժոխս. վասն զի հակառակորդն քո արկեալ է անդ զանձն իւր. ո՞չ խելագարութեանըդ, հակառակորդն քո ատելով զքեզ ուրանայ զքրիստոնէութիւնն իւր և լինի որ զի սատանայի. ընդէր և դու կամիս նմանիւ հակառակորդին քում, թող ըզչարն կորնչել չարութեամբ իւրով, և

դու սիրելով զնա լեր ճշմարիտ քրիստոնեայ և որդի աստուծոյ: Եպաթէ ոչ՝ գիտեա ստուգիւ, որ և դու ատելով զնա՝ լինելոց ես որդի սատանայի, և մերկացեալ ի քրիստոնէութենէ. զի օրէնքն Քրիստոսի, սէր և միաբանութիւն է: Տես զինչ ասէ Պօղոս եթէ զլեզուս մարդկան խօսից եմ և հրեշտակաց, և զսէր ոչ ունիցիմ, եղէց ես իրրե պղբնձ որ հնչէ, կամ իրրե զծնծղայս որք զօղանչն: Եւ այլն՝ զորս երկարապէս ճառէ վասն սիրոյ որ առանց սիրոյ ամենայնն ընդունայն է: Ա ասնորոյ խնդրեմ ի քէն եղբայր՝ վասն մահուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. մի՛ անպտուղ առնել վասն քո զարիւն Եստուծոյ. այլ կալ զեղբայրսիրութիւն առ ամենայն քրիստոնեայս: Եւ ի բաց ձըգեաց զամենայն վիճարանութիւնս, և ըզկոիւս: Եւ հաւատա զամենայն որ ինչ պարունակի ի մէջ հաւատամքին մերոյ, և յետ որոյ խորհեա՛ միայն զործել ըզբարիս, և խորշեր ի մեղաց, և կատարեա՛ զպատուիրանս աւետարանին. լե՛ր աղօթասէր և աղքատասէր. և անպտկաս ի ժամն և ի պատարագս, և մատի՛ր անյապաղ առ կենարար մարմին և արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ ապա հաւատա ստուգիւ թէ անսուտն Յիսուս Քրիստոս տացէ քեզ կեանս յաւիտենականս, զոր խոստացաւ ամենայն սիրելեաց և հաւատացելոց խորոց: Ամա փառք յաւիտեանս ամէն:

Հաւատամքն Եկեղեց ժաղացին այս է:

Հաւատամք ի մի Եստուած ի հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, և ամենայն երեւելեաց և աներեւութից. և ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Եստուծոյ, ծնեալն Եստուծոյ հօրէ միածին նախքան զամենայն յաւիտեանս. լոյս ի լուսոյ, Եստուած ճշմարիտ յԵստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն ի բնութենէ հօր՝ որով ամենայն ինչ եղեւ. որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովի որբով, խոչեալ փոխաւոհի մեր

Յիսուս Քրիստոս յորդին Եստուծոյ, ծնեալն յԵստուծոյ հօրէ միածինն. այսինքն յէութենէ հօր. Եստուած յԵստուծոյ, լոյս ի լուսոյ, Եստուած ճշմարիտ, յԵստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած, նոյն ինքն ի բնութենէ հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի: Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, չարչարեցաւ. յերրորդ յաւուր յարեաւ, ելեալ ի յերկինս. գալոց է դատել զկենդանիս և զմեռեալս: Հաւատամք և ի սուրբ Հոգին: Իսկ որք ասենն էր երբեմ յորժամուշ էր որդին, և թէ նախ քան զծնանին ո՛չ էր, և թէ յոչեից եղեալ, կամ յայլմէ յէութենէ և կամ ի գոյութեն: ասեն լինել զորդին Եստուծոյ, և թէ փոփոխելի է կամ այլայլելի, զայնպիսի ասացողն նղովէ Կաթուղեկէ և առաքելական Եկեղեցի:

Հաւատամքն Եկեղեցին այս է:

Հաւատամք ի մի Եստուած ի հայրն ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, և ամենայն երեւելեաց և աներեւութից. և ի մի Տէր Յիսուս Քրիստոս յորդին Եստուծոյ, ծնեալն յԵստուծոյ հօրէ միածին նախքան զամենայն յաւիտեանս. լոյս ի լուսոյ, Եստուած ճշմարիտ յԵստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն ի բնութենէ հօր՝ որով ամենայն ինչ եղեւ. որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից մարմնացաւ, ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովի որբով, խոչեալ փոխաւոհի մեր

ի ներքոյ Պօնտացւոյ Պիղատոսի, չարչարեալ թաղեալ՝ յերրորդ յաւուր յարուցեալ ըստ զրոց. ելեալ ի յերկինս նըստաւ ընդ աջմէ ։ օր: Այլէ գալոց է փառօք դատել զիենդանիս և զմեռեալու, որոյ թագաւորութեանն ոչ զոյ վախճան:

Հաւատամք և ի սուրբ Հոգին ի Տէրն և ի կենդանարարն, որ ի հօրէ ելանէ, որ ընդ հօր և ընդ որդւոյ ի միասին երկրպագի և փառաւորի, որ և խօսեցաւ ի մարգարէս: Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցի:

Դաւանեմք զմի մղրտութիւնի թողութիւն մեղաց. սպասեմք յարութեանն մեռելոց, և կենացն հանդերձեալ կենցադւոյս, ամէն:

Առքա են հաւատամք Աիկիոյ և Կոստանդինուպոլսի ժողովոցն. որք շարունակեալ են ի մէջ հաւատամքին մերոյ, և զոր դաւանին այլ ամենայն Արքիղեցիք քրիստոնէից: Օայս հաւատս միւս ամենայն հետեւեալ ժողովք ամենայն ազգաց քրիստոնէից հաստատեցին և սահմանեցին ասելով թէ բովանդակ ամենայն բանքն հաւատոյ լիապէս և կատարելապէս դաւանին ի մէջ այս հանդանակիս հաւատոյ:

Վամնորոյ ի ժողովը Ռիմինիայու երբ քրիստոնեայքն մատուցին հայրապետաց զնոր հանդանակ հաւատոյ, յայնժամ աւելի քանթէ ԳՃ՛ ուղղափառք հայրապետք պատասխանի ետուն ասելով թէ՝ մեք ո՛չ եմք ժողովեալք աստ վասն ուսուցանելոյ վերսաին զըմնս հաւատոյ, զի մեք չնորհօքն Եստուծոյ ունիմք և կալեալ եմք զՃմարիտ հաւատն: Այլ միայն ժողովեալ եմք վասն դատելոյ զայնոսիկ՝ որք ջանան

ապականել զհաւատն նոր բանիւք. վասնորոյ եթէ կամիք վերջ առնել այսուհետե ամենայն կուոց և վիճարանութեանց. պարտիք անպատճառ հետեիլ ամենայն սահմանեալ բանիցն Աիկիոյ և Կոստանդնուպոլսի ժողովոցն. զի այն ժողովք պարունակեալ են ի հանդանակս իւրեանց լիապէս զամենայն բանս զոր հարկէ դաւանել ի վերայ հաւատոյ: Օայս վկայէսուրբըն Եթանաս ի մէջ գրքին իւրոյ վասն ժողովոյն:

Եյսպէս և առաջին ժողովն Արքեսոսի յութերորդ գործն իւր՝ որ եղե Յուլիսի Իմ., յառաջ բերեալ զհաւատամքն Աիկիոյ ժողովոցն: Եյսպէս պարտ և պատշաճ է ամենեցուն համաձայն լինել այս հաւատոյ սահմանիս Աիկիոյ ժողովոցն զի այս հաւատոյ սահմանս բարեպաշտ է, բաւական է վասն իրկութեան աշխարհի: Եւ ի վերջն դարձեալ սահմանեաց այնպէս: Եյսու հետեւ մի՛ ոք իշխեսէ զայլ հաւատս յառաջ բերել, կամ զրել, բաց ի հաւատոյն զոր սուրբ հարքն Աիկիոյ ժողովոցն հոգւով սրբով սահմանեցին: Խոկ որք յանդգնին զայլ հաւատս շարազրել, կամ զրեալ մատուցանեն այնոցիկ՝ որք ի Ճելշնացւոց՝ կամ ի հրեից՝ կամ ի հերձուածողացիձանաշումն Ճմարտութեան դառնալ յուղեն, այնպիսիքն թէ եպիսկոպոսք են, ընկեցին յեպիսկոպոսութենէ, և թէ քահանայքն են, լուծցին ի կարգէն, և թէ աշխարհականք են, նղովեալ են:

Ամանապէս և ի մէջ գործոյ գրքոյն երկրորդ ժողովոցն Արքեսոսի այսպէս սահմանեալ կայ: Գէսուկորս Արքիսկոպոսն Եղէքսանդրու ասէ՝ Աիկիոյ և Արքեսոսի առաջին ժողովքն՝ երկու ժողովք անուա-

նեցան, սակայն զմիմիայն հաւատոս քարոզին ի միասին։ Առւրբ ժողովն ասէ։ Կարքըն զամենայն ինչ կատարեալ և անթերի սահմանեցին, որ յաւելու կամ պակասեցուցանէ, նզովեալ լիցի։ Դէսուկորոս եպիսկոպոսն ասէ՝ ձայնք ձեր՝ և Ըստուծոյ ընդունելի են, և Քրիստոսի հաճոյ են, որ ոք խնդրէ, և կամ նորոգէ մի բան, այնպիսի նզովեալ է։

Առւրբ ժողովն ասէ՝ կեցցէ մեծ պահպանն հաւատոյ Դէսուկորոս եպիսկոպոսապետն։

Դարձեալ՝ ասէ՝ Դէսուկորոս թէ, ասեմ և այլ բան մի ահազին և սարսափելի, ասէ գիրն թէ՝ մեղանչելով մեղանչեցէ այր առըն՝ կացցեն վան նորա յաղօթս առ Տէր։ Երդ՝ թէ հոգին սուրբ նստէր ի ժողովս ընդ հարցն, սահմանէր և ինքն՝ զորինչ սուրբ հարքն սահմանէին, ապա ով որ նորոգէ զայն սահմանեալն, զհոգւոյն սրբոյ շնորհն ընդունայն առնէ։

Առւրբ ժողովն ասէ՝ մեք ամենեքեանս զայդ ասեմք Դէսուկորոս ասէ սահման զորեղին սուրբ հարքն, այլ ոչ կարեն այսուհետեւ սահմանիլ։

Առւրբ ժողովն ասէ՝ ձայն քո ձայն հոգւոյն սրբոյ է, ով պատուական կանոնաց քետակաւին կենդանի են հարքն՝ ով պատուական հաւատոյ կեցցէ Դէսուկորոսն, կեցցէ ջատագովն ժողովոց։ Եւ երբ ընթերցան զհաւատամքն Կիկիոյ, և զվերոյ սահմանադրութիւն առաջին ժողովոյն Եփեսոսի։ Վպա Դէսուկորոս ասէ, կարծեմ ամենեցուն հաճոյ է հաւատամքն Կիկիոյ ժողովոյն, զոր և առաջին սուրբ այս քաղաքիս հաստատեաց թէ պարտէ պահել միայն զայն հաւատամքն՝ որ բաւական

է վասն հաւատոյ մերոյ։ Քանզի սուրբ հարքն առաջին ժողովոյն Եփեսոսի, այսպէս սահմանեցին թէ՝ որ ոք խօսի՝ կամ խնդրէ աւելի քան զայս հաւատամքս, պարտաւոր լիցի դատապարտութեան։ Օինչ ասէք դուք իւրաքանչիւրքդ, մի՛թէ ոչ իցէ այսպէս, ասաացէ՛ ուրեմն իւրաքանչիւր ոք ի ձէնջ, թէ իւր միտքն այս է՛ թէ ոչ։

Գրալասիոս Եպիսկոպոսն Աեսարու կապադովկացւոց ասէ՝ ԳՆ՛ԴԲ սուրբ հարցըն հաւատամքի լաւութիւնն ցուցեալ եղեւ, յորժամ աստուածային շնորհօք լցեալ բարբառեցան զայն հաւատամքն, զոր յետոյ կրկին ի սուրբ հարցն առաջին այս գերապայծառ քաղաքիս հաստատեցաւ։ Ա ամնորոյ հարկ է ամենելին անփոփոխ պահել զայն հաւատոն, քանզի յաւելումն և պակասումն հակառակին սուրբ կանոնին։ Խսկ որք հակառակ են այսմ բանիս, յայնպիսեացն գարշեմ ես իբրև ի լուծանողաց և յաւելողաց ուղիղ հաւատոյն։ Առւղոն Եպիսկոպոս Փիլիպպացւոց ասէ հաւատամ զդաւանութիւն ԳՆ՛ԴԲ սուրբ հարցն Կիկիոյ ժողովոյն և համաձայնիմ առաջին սուրբ ժողովոյն այս քաղաքիս։ Եւ ով որ հաւատոյ կամ ուսուցանէ աւելի քան զայն, ոչ է ուղղափառ։

Յովհաննէս եպիսկոպոսն Աերաստիոյ ի այստան՝ ասէ՝ զախտս մուծեալն ի բարեպաշտութիւն, ոչ այլ ինչէ, քան թէ զամբարշտութիւնն ընդ հաւատոյ խառնել յանդգնել։ Զէ ով որ խոտէ զայն հաւատոն՝ որ հաստատեալ է ի բազմութէնէ ի հնութեան և յիշխանութեան զարդարողացն իւրօց. այնպիսի ոչինչ առողջութեան հիմն ունի, այլ փո-

փոխական շարութեամբ կամաց ախտացեալ է. վասնորոյ և ես յամենայն հերձուածողաց և ի նորաբոյս բանից գարշիմ. և զայն հաւատն միայն պաշտեմ, որ յամենասուրբ հարցն շարադրեալ է, որ նեցուկ և սիւն է բովանդակ բարեպաշտութեան մերոյ:

Թէոդորոս եպիսկոպոսն Տարսոնի Աիկիոյ ասէ և ես համախոհ և համաձայն եմ հաւատամբին սուրբ Հարցն Աիկիոյ, և Եփեսոսի առաջին ժողովոյն և ով ոք աւելի քան զայն հաւատայ, զնառողափառ ոչ համարիմ:

Քասիլիոս Եպիսկոպոսն Աելեկիոյ Խօսրիացւոյ ասէ՝ միենոյն հոգւոյն սրբոյ ներգործութեամբն շարադրած են հաւատամբըն Աիկիոյ, և սահմանքն առաջին ժողովոյն այս քաղաքիս: Ա ասնորոյ ով ոք քան զայսոսիկ աւելի հաւատայ, և կամ ուսուցանէ, զայնպիսին թշնամի ժողովրդեանն Քրիստոսի համարիմ:

Եւ Ոտեփաննոս Եպիսկոպոս Եփեսոսի ասէ յատինի են սահմանքն Գո՞մի՞ս: սուրբ Հարցն Աիկիոյ ժողովոյն, զոր և հաստատեաց յետոյ սուրբ տիեզերագումար ժողովն այս քաղաքիս. վասնորոյ ով ոք աւելի քան զայն բանսն հաւատոյ խօսիցի նզովեալ է. զի ճշմարիտ և ուղեղ հաւատ այն է:

Ուրանիոս Եպիսկոպոսն Մէրիարուկողմանն Աորոյէննէի ասէ՝ և թարգմանէր զնա և Լոգիոս երեցն Եղեսիոյ, ևս յամենայն ժամ հաստատուն մնամ ի հաւատամբն Աիկիոյ ժողովոյն, և ի սահմանադրութիւնն առաջին ժողովոյն այս մայրաքաղաքիս, և ով որ աւելի քան զայն հաւատամբ խօսի կամ յանդգնի քննել, զայն-

պիսի նզովեմ, և յուղեղ հաւատոյն օտարացուցանեմ:

Ոտեփաննոս Եպիսկոպոս Երապօլայ ասէ՝ մեք հաւանիմք այսմիկ, և բաց յայսմանէ այլ աւելի բան չեմք հաւատացեալ և ոչ հաւատալոց եմք, այլ մինչ ի վերջին շունչն մեր սմա հետևելոց եմք: Ի՞նդէմ յանդգնութեանցն այնոցիկ՝ որ բուռն արկանեն աւելի քան զայս հաւատս ուսուցանել:

Ոուրբն ժողովն ասէ՝ մեք ամենեքեանքս յայս միտս և ի յայս հաւատս եմք:

Եյսքանս բաւական լիցի վասն երկրորդ ժողովոյն Եփեսոսի:

Այսն է և յերրորդ գործն Քաղկեդոնի ժողովոյն, որ եղեւ ի հոկտ. Ճ.Դ. այսպէս զրեալ կայ: Եմենապատուելի Եպիսկոպոսքն աղաղակեցին ասելով՝ բաց ի հաւատամբէն Աիկիոյ և Առատանդնուպօլոյ ժողովոցն՝ այլ որիշ հաւատ ոչ ոք առնէ, և մեք ոչ յանդգնիմք բուռն արկանել ի շարադրել զդաւանութիւն հաւատոյ. զի հարքն ուսուցին մեզ զհաւատն և նոցա դաւանութիւնն զրեալ պահեալ է: Բաց ի յայն դաւանութենէն, ոչ այլ կարեմք ասել կամ խօսիլ. հաւատամբն բաւական է զնա պինդ պահեսցուք:

Եւի յեօթներորդ գործն նոյն ժողովոյն Քաղկեդոնի՝ որ եղեւ ի հոկտ. Ճ.Դ., յետ զնելց զհաւատոյ սահմանն Աիկիոյ և Առատանդինուպօլոյ ժողովոցն՝ ապա սահմանեցին այսպէս:

Եռ ի կատարեալ Ճանաչումն և հաստատութիւն բարեպաշտութեան բաւական էր այս իմաստնական և փրկական աստուածածնորհ հաւատամբս, որ ուսուցանէ զկատարեալ լրումն Հօր և Որդւոյ և Հոգւոյն

սրբոյ՝ և յայտ առնել հաւատարիմ ընդունողացն զմարդեղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ի վերջն սահմանադրութեան ասեն՝ սահմանեաց այս տիեզերագումար սուրբ ժողովս: Օք մի՞ ոք իշխեսցէ զայլ հաւատ յառաջ բերել կամ գրել կամ ուսուցանել բաց ի վերոյ գրեալ հաւատամբէն, վասնորոյ որ սյսպէս առնիցէ և զայլ սահման հաւատոյ աւանդիցէ այնոցիկ՝ որք կամիցին դառնալ ի կուապաշտութենէ ի ճանաշումն ձըշմարտութեան, այնպիսին թէ Եպիսկոպոսիցէ և կամ քահանայ, անկցին ի կարգէ, և կամ աշխարհական կամ կրօնաւոր իցէ նզովեալ լիցի յայս սուրբ ժողովս: զայս ամենայն ասէ Քաղկեդոնի սուրբ ժողովն:

Ապէս և ամենայն հետեւեալ ժողովքն խօսեցան և սահմանեցին միարան ձայնիւթէ ամենայն բանքն հաւատոյ լիապէս և կատարեւապէս գտանին ի մէջ հաւատամբին Կիկիոյ և Կոստանդինուպոլսի առաջին ժողովոցն՝ և նզովք եղին ընդդէն նոցա՝ որք յանդգնին զայլ աւելի բանս հաւատոյ յառաջ բերել:

Ուստի յայտ է թէ՝ ամենայն մասնաւոր եկեղեցիքն մի և նոյն հաւատ ունին և միարանին ընդ միմեանս ի բանս հաւատոյ՝ Քանզի ամենեքեան դաւանին զամենայն բանս հաւատամբիցն Կիկիոյ և Կոստանդինուպոլսի ժողովոցն՝ որ պարունակեալ են ի հանգանակս իւրեանց լիապէս զամենայն բանս հաւատոյ՝ ըստ վկայութեան միւս ամենայն ժողովոցն:

Եւ թէպէտ այն հետեւեալ ժողովք եղին զմի քանի նոր բանս ի մէջ սահմանադրութեան իւրեանց, սակայն ո՛չ հնարեցին նոքա զայն բանս հաւատոյ՝ որովհետու նոյ-

ժողովքն սահմանեալ են յայտնապէս թէ՝ ամենայն բանքն հաւատոյ լիապէս եղեալ են ի մէջ հաւատամբին Կիկիոյ և Կոստանդինուպոլսի ժողովոցն՝ որպէս տեսաք ի վերոյ, այլ հնարեցին զայն նորաձայն բանսն իրբե զիմաստասիրական բարբառ, վասն մեկնելոյ զբանս հաւատոյն Կիկիոյ և Կոստանդինուպոլսի ժողովոցն: Եւ զայն իմաստասիրական բարբառն ո՛չ սահմանեցին վասն ամենայն հասարակ ազգաց, որպէս ցուցաք ի մեկնութեանն Կաթուղիկէ Եկեղեցւոյն՝ թէ անհնար է ամենայն ազգաց մի և նոյն իմաստասիրական բարբառով վարիլ. այլ սահմանեցին զայն վասն իւրեանց սեփհական ազգին:

Օրօրինակ ժողովքն Հռոմացւոց սահմանեցին զիմաստասիրական բարբառ և զկերպս խօսելոյ միայն վասն հաւատոյ ըստ լեզուի իւրեանց Քանզի որովհետեւ զանազան ազգաց զանազան են և լեզուքն, ապա հարկաւոր է և զանազան բարբառով վարիլ վասն մեկնելոյ զմի և նոյն բան հաւատոյ:

Վասնորոյ Հայք ո՛չ պարտական են վարիլ իմաստասիրական բարբառով ժողովոյն Հռոմացւոց. և ո՛չ Հռոմով պարտական են վարիլ բարբառով Հայոց: Քանզի այս անհնար է. այլ իւրաքանչիւր մասնաւոր Եկեղեցիք՝ պարտին վարիլ իմաստասիրական բարբառով ժողովոյն իւրեանց:

Ուստի երբ ժողովքն սահմանեցին զիմաստասիրական բարբառս, ո՛չ ասացին թէ՝ մեք զայս վասն ամենայն ազգաց սահմանեմք, որ անհնար էր: Օք Եպիսկոպոսն մից ազգի ո՛չ ունի իշխանութիւն սահմանելոյ և կամ հրամայելոյ այլոց ազգաց. այլ սահմանեցին զնոսա՝ վասն իւրեանց մասնաւոր եկեղեցեացն՝ յորոյ վերայ ու-

նեին իշխանութիւն սահմանելոյ և հրամայելոյ: Աւստի յայտէ թէ իւրաքանչիւր մասնաւոր եկեղեցին, պարտի հետեւիլ իմաստասիրական բարբառոյ ժողովոյն իւրոյ: Եւ այս զանազանութիւնս իմաստասիրական բառից և կերպից խօսելոյ, ոչ բառնայ զմիութիւն կաթուղիկէ և ընդհանրական եկեղեցւոյն. որ մեք ցուցաք յայտնապէս թէ՝ ի միութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն հարկաւոր է միաքանութիւն հաւատոյ: Քանզի անհնար է միութիւն իմաստասիրական բառից այսքան զանազան ազգաց:

Յայս ամենայն վերոյգրեալ բանից յայտնի լինի թէ՝ ով ոք ոչ հետեւի իմաստասիրական բառից եկեղեցւոյն իւրոյ, նա ապստամբ է և անհնազանդ եկեղեցւոյն իւրոյ, և արժանի է բանադրանաց ձայրապետաց և Ըռաջնորդաց եկեղեցւոյն իւրոյ: Եւ թէ անդարձ մնայ ի ներքոյ այս բանադրանաց, այնպիսին որոշ յեկեղեցւոյն Քրիստոսի, և մասն և բաժին ընդհեթանուաց ընդունի. որպէս և ասէ Տէրըն մեր՝ թէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իրբե զհեթանուս և զմուքսաւոր:

Զգոյշ լեռ ուրեմն եղբայր՝ և ի բացձգեաւ այսուհետեւ զհպարտութիւն մտաց քոց. ջանա փրկել զհոգիդ քո հնազանդելով եկեղեցւոյդ քո: Օքնչ օգուտ է քեզ եթէ զաշխարհս ամենայն շահեսցես և զանձն քո տուժեսցես. զինչ շահ է քեզ հակառակելովդ ի վերայ փիլիսոփայական բանից իմաստուն և աստուածարան երեւիլ սահայն ապստամբելովդ ընդդէմ եկեղեցւոյդ քո, զհոգիդ կորուսնես:

Մի ասեր թէ՝ կան ևս քանի ժողովք ձայոց՝ որք սահմանեցին ասել Ի բնութիւն ի Քրիստոս, և զայլ սոցին նման բանս. քանզի այն ժողովքն ոչ են եկեղեցւոյդ քո, որովհետեւ եկեղեցիդ ոչ ընդունի: Օք որպէս և Հոռոմք և Լամթինք ժամանակիս այսմիկ ոչ են պարտական հետեւիլ երկրորդ ժողովոյն Եփեսոսի, և այլ բազում ժողովոց՝ զոր ոչ ընդունին եկեղեցիք նոցա. նմանապէս և Հայք ոչ են պարտական հետեւիլ այնմ ժողովոցն, զոր Հայոց եկեղեցին ոչ ընդունի, այլ միայն պարտին հետեւիլ ժողովոցն այնց՝ զոր ընդունի եկեղեցին իւրեանց: Աապէս պարտիս հետեւիլ և դու՝ եթէ կամիս հընազանդել եկեղեցւոյդ քո. ապա թէ ոչ զիտեաւ սոուզիւ՝ որ կատարելոց է ի քեզ այն զարհուրելի բանն՝ որ ասէ՝ թէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իրբեզիթանոսս և զմաքսաւոր, յորմէ փրկեալ ազատեսցէ զամենայն հաւատացեալս իւր Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որում վայել է փառք յաւիտեանս. ամէն:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԵՏՄՈՒԹՈՒՆ

ԱՆՑԻՑ ԱՆՑԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՑ ՎԱՆԻՑ.

(Ե-ր-ր-ր-ն-ս-բ-բ-ն)

Գ-Լ-ՈՒԽ Ժ.

Համառուսական ժամանակակից պատճառականիս.

Մինչ գալատեամբս իմով ծանեայ զաստուածահածոյ գեղեցիկ վարս հարցն Աէվանու, վառեալ սէր իմ յարակցութեանց